

մունքներով մէկ մըն էր. կերպարանքն
եւրոպացի կրնար զուրցուիլ, թէ որ
մորթին մութ գոյնը չունենար: Նաև
Սիմէոն անունն ալ կը տրուի իրեն, որ
մկրտութեան անունն է: Հագուստով
նորագոյն տարազին կը հետևի, իսկ
բնակարանի համար գոհ չըլլար ծառի
կեղևներով կամ տերևներով խրճիթ մը
ունենալ, ինչպէս են միւս իր ընկերա-
կից թագաւորաց բնակարանները. հա-
պա իրեն համար մասնաւոր բնակարան
մը չինած է, որ թէպէտ և ծառի կեղև-
ներով է, այլ վայելուչ է և մաքուր, և
մէջը նաև մէկ քանի չքեղասիրութեան
առարկաներ կան, ինչպէս ստոլներ,
աթոռներ և անկողին մը: Նաև իր Մա-
րիամ կինն ալ, կերպերուն, սովորու-
թեանց և հագուստին մէջ՝ եւրոպական
նմանութիւններ կը փնտռէ:

Վիկտորիայ գաղթականութեան բը-
նիկները քսան տարի առաջ հազարա-
ւոր կը թուէին, և հիմա հազիւ թէ քա-
նի մը հարիւրաւոր կան: Քաղաքակա-
նութիւնը հետզհետէ կը վերցընէ զիրենք
մէջտեղէն. կամ ան է որ կամաց կա-
մաց հաստատուն կեանքի զիրենք ախոր-
ժեցնելով եւրոպացւոց հետ կը խառնէ,
որով և արտաքոյ կարգի շուտ կը մեռ-
նին, և կամ ձանձրացած այն քաղաքա-
կանացեալ բռնադատութենէն, որ ի-
րենց համար բնութեան դէմ է, ինքզինք-
նին անտառներուն մէջ կը թաղեն. այս-
պէս հետզհետէ ցեղերնին նուազելով,
քիչ ատենէ բոլորովին վերնան պիտի
մէջտեղէն:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԻՆՆԻՏԱՄԱՆԵՐՈՐԴ

Թոքոց շարժմունքը:

(Տես էրես 295)

Կը յուսամ թէ բաւական բան զուր-
ցցի. քեզի, սիրելի օրիորդիկ, որ կարե-

նաս ըմբռնել այն ուժը որով, օդը՝ բո-
լոր երկրիս երեսին վրայ գտնուած մար-
մինները, և մերն իսկ հետևաբար, կը
ճնշէ:

Մէյ մը որ ատ ըմբռնես, չկայ զիւր-
ըմբռնելի բան՝ քան հասկընալ թէ ինչ-
պէս օդը մեր թոքոց մէջ կ'երթայ ու
կու գայ:

Երբ խոհակերը երկու կամ երեք
պզտի կայծերով իր կրակարանին ա-
ծուխը վառել կ'ուղէ, ինչ կ'ընէ:

— Փութը կ'առնէ:

— Եւ երբ ձեռքի տակ փութը չունի:

— Բոլոր ուժովը վրան կը փչէ:

Հա, հա. ուրեմն կենդանի փութը մըն
ենք, որ ըստ պիտոյից փայտէ ու կաշիէ
փրքին տեղը կրնանք լեցընել. և եթէ կըր-
նանք փրքին պաշտօնը ընել, միթէ անոր
համար է որ ի մեզ փրքի նման շինուած
պզտի մեքենայ մը ունինք:

Ստոյգ այդպէս է, և ասիկայ ինծի ա-
ռիթ մըն է, որ թոքոց խաղը հասկըցնելու
համար՝ փրքին խաղը մեկնեմ քեզի, որ
ամենուն ձեռքը կը գտնուի, և սակայն
գործածողաց երեք քառորդը երբեք ա-
նոր մեկնութիւնը փնտռած չէ:

Փութը, ինչպէս զիտես, երկու տախ-
տակներէ կը բաղկանայ, որ ըստ կամս
կրնան հեռանալ ու մերձենալ մէկմէ-
կու, և կաշիի կտորով մը մէկմէկու յա-
րեալ են, զոր անանկ յարմարցուցած
է, որ ինք իր վրան ծալլուի երբ տախ-
տակները մէկմէկու մօտենան. անանկ
որ ասոնց մէջ տեղը ինչպէս աղէկ գոց
տուփ մը կը ձևանայ, որուն ընդունա-
կութիւնը տախտակներուն իւրաքան-
չիւր շարժմանը համեմատ կ'աճի կամ
կը նուազի:

Փութը վար կ'առնունք ու կը տեսնանք
որ տախտակները մէկմէկու վրայ յար-
մարցուցած են, ու տուփը ամենափոքր
է: Մէջը ինչ կայ:

— Բան մը չկայ, պարապ է:

— Հա, կը կարծես ատիկայ. կարծես
նաև որ գաւաթները պարապ են երբ
մէկը մէջինը խմէ, և թէ քաղցրաւենեաց
ամանները պարապ են անուշները ու
տեղէն ետքը: Այնչափ պարապ բաներ

չկան որչափ դու միտքդ դրած ես, սիրուն տղաս: Օղը կը մուռնաս, այն վայրագը որ միշտ ընդարձակիլ կը սիրէ, և ամեն բան իր առջևէն կը մղէ: Այդ օղը պարոն մըն է որ ամենեւին անհանգիստ չըլլար, և ինչ տեղ որ մէկը թողու ելլէ՝ ինքը կ'առնու կը գրաւէ. իւրաքանչիւր զգալ մը քաղցրաւենի որ դու պնակդ կը քաշես, անոր թողած տեղը ինքը կ'անցնի. իւրաքանչիւր ումով ջրի որ կը խմես, զնացած ջրին տեղը ինքը կը բռնէ: Երբ կը կարծես որ գաւաթը և ամանը պարապ են, անոնք օդով լեցուն են: Դու զայն չես տեսնար, բայց ապահով կըրնաս ըլլալ որ ան հոն տեղն է:

Ուրեմն փրքին տփին մէջ օդ կայ, որովհետեւ ան ամեն տեղ կը գտնուի ուր բան մը չկայ որ իրեն արգելք ըլլայ: Իրաւ է որ քիչ մը միայն կայ, որովհետեւ տուփը պզտիկ է ու շատ բովանդակել չիկրնար:

Բայց ահա տախտակները կը հեռացընեմ մէկմէկէ, և տուփը որ պզտիկ էր կը փոխուի մեծ կ'ըլլայ: Ահա քեզի պարապ տուփ մը հիմա, գոնէ մասամբ մը պարապ, վասն զի ինչպէս դիւթութեւ տեղ մը կը ձևանայ ուր իրապէս բան մը չգտնուիր, որովհետեւ առաջուց այդ տեղը չկար:

Այո. բայց վերի տախտակին մէջ տեղը նայէ: Կը տեսնաս այն պզտի ծակը, և անոր տակը պզտի կտոր մը կա: չին որ զան կարծես թէ կը գոցէ: Ատիկայ կափարիչ մըն է, այն դռներէն մէկ մը՝ ինչպէս սրտին մէջ տեսանք, և ինչպէս նաեւ ամեն տուն կը գտնուի, որ մարդիկներուն թոյլ կու տան որ մէկ կողմէն անցնին, այլ հակառակ կողմէն ոչ: Այս դուռը այն ատեն կը բացուի երբ դրսուանց մղուի, և ներս մտածին թոյլ չտար որ նորէն դուրս ելլէ:

Դուրսը եղած օղը, ըսինք, միշտ և ամեն դին կը մղէ: Ուրեմն բնականաբար կափարիչը կը մղէ, որովհետեւ ետեւը բան մը չկայ որ զան բռնէ, քանի որ տփին ներսը տեղ կը բացուի, ինքը ներս կը մտնէ ու զան կը լեցընէ:

Սակայն շուտ մը երկու տախտակաց

մէջ տեղը կը բռնուի երբ անոնք մէկմէկու կը մերձեցուին: Ասոնք քաղաքավարութեամբ մը անկէ խոյս տալու կը հրաւիրեն զինքը, նման այն պահապաններու գնդից՝ որ Դիւյլրիի և Լիւքսանպուրի մէջ երթալու ժամը հասածին պէս, երևան կ'ելլեն, պտրտողները իրենց առջևէն քշելով մինչև որ դրան ճամբան գտնել տան: Օղը ալ չկրնար իր մտած ճամբէն ետ դառնալ. դուռը գոց է: Բայց որովհետեւ կամայ ահամայ դուրս ելլելու է, տփին ծայրը եղած խողովակին միջէն կը սահի, և անոր միջէն է որ յարձակողաբար կրակին վրայ կ'իջնայ:

Անոր երթալէն ետքը տախտակները դարձեալ կը հեռանան մէկմէկէ, և այն պէս գործողութիւնը անսահմանաբար կը շարունակի:

Ուստի սոյն այս բանս է որ կ'ըլլայ նաեւ մեր կրծոց մէջ:

Պու կուրծքդ, սիրելի օրիորդ, տուփ մըն է՝ որ փոփոխակի կ'ընդարձակի և կը պզտիկնայ, առջի շարժումներով օդուն տեղ բանալով, և երկրորդով՝ զան անկէ մերժելով: Փուք մըն է, ոչ աւելի և ոչ պակաս, սակայն խոհակերաց փքէն աւելի պարզ: Ելից խողովակը մի և նոյն ժամանակ նաեւ իրը մուտք կը ծառայէ, և փոխանակ երկու տախտակի՝ մէկ մը միայն կայ:

Ելից խողովակը հագագն է, որուն վրայ արդէն խօսեցանք՝ երբ ծուռ կլլելուն վրայ խօսք ըրինք, և դրսի օդուն հետ բերնէն և քթէն կը հաղորդուի. այս բանս մեզի դիւրութիւն մըն է շնչելու թէ մէկով և թէ մէկալով, ինչպէս կ'ուզենք:

Իսկ տախտակին նկատմամբ՝ լերդին առթիւ քեզի խօսք մ'ըրի: Առաջաստն է այն բաժանման անջրպետը, այն մարմնոյն կրկին յարկաց մէջ տեղը ձգուած տախտակամածը, այսինքն որովայնի և կրծոց մէջ տեղը:

Սակայն այս բանիս մէջն է գլխաւորապէս որ յայտնի կ'երևայ, բոլոր իր մեծագործութեամբը Աստուծոյ դիւտից

անհուն առաւելութիւնը՝ մեր խեղճ ու զորմեղի գիւտից առջին :

Անանկ մէկ փութի մը համար որ 'ի մեզ այն հրաշալի կրակը պահպանելու պատիւն ունենար պիտի, այն գերագոյն սուրբ կրակը որ կեանք կը կոչուի, հասարակ տախտակէ մըն ալ լաւագոյն բան մը պէտք էր : Ուստի և այս զարմանալի հրաշալիք մըն է, որուն պատմութիւնը քեզի կ'ուզեմ մանրամասն զուրցել : Կարգալու որ ըլլաս, կ'երևակայեմ որ այդ առաքաւտ բառը այնչափ խորթ հնչէ պիտոր ականջիդ :

Հիմա նախ փրքին շէնքին վրայ հայեցուածք մը ձգենք :

Ողնայարի սիւնակին երկու կողմը, վզէն սկսեալ մինչև մէջքը, տասուերկու տափակ ոսկր կայ վրայէ վրայ շարուած, և աղեղի ձևով, որոնք կողք կը կոչուին : Կողից առաջին եօթը զոյգը կրճուկը ըսուած ոսկեր մը վրայ կու գան կը յենուն կամ կը միանան, զոր և դու իսկ մատովդ կրնաս զգալ մինչև ստամոքսին պարապը : մատդ հոն հասնելով՝ յանկարծ մէջը կը խոթուի, ալ հոնկէ վար կրծոսկր չկայ, և իւրաքանչիւր կողմի յետին հինգ կողերը՝ ալ դիմացէ դիմաց մէկմէկու հետ չեն յարիր : Այս արտաճառիս համար զասոնք քերտ կողք կը կոչեն : Անոր փոխանակ իրենց ծայրովը մէկմէկու հետ բաւական աւուր գոյացութեամբ մը կը յարին, որ դիւրաթեք է և քիչ մը առաձգական, և կը կոչուի աճառ : Աղէկ դիտէ առջի անգամուն որ սեղանի վրայ առջևդ հորթու մը պզտի ոսկր դնեն, ծայրը ճերմակ բան մը կը տեսնես որ ակռայի տակ կը կծրտայ : այդ բանը աճառ մըն է :

Այս ամենէն կը բաղկանայ մեր փութին ատաղձը, զոր կրնաս իբր տեսակ մը վանդակ երևակայել, վարի կողմէն ընդլայնած, սրածայր երթալով դէպ 'ի վեր : վասն զի առաջին կողերէն ձևացած աղեղները միւսներէն աւելի պղզաիկ են, և բոլորը մէկէն տեսակ մը օղով կը վերջանայ, որուն միջէն քովէ քով որկորը և կոկորդը կ'անցնին :

Կողից մէկմէկու մէջ տեղ պարապ

թողած միջոցը՝ զնդերք զրաւած են, որ մէկէն միւսը կը ձգեն, և վարի բացուածքը առաջաստով գոցուած է, այն հրաշալի տախտակով՝ որուն պատմութիւնը զուրցելու քեզի խօսք տուած եմ :

Առաջաստը, ըսեր եմ քեզի առաջուց, անջրպետ մըն է, տախտակամած մը՝ որ մեր մարմինը երկու յարկ կը բաժնէ : Թէ որ կը յիշես, մեծ, նուրբ ու տափակ զնդեր մըն է, որ ինչպէս վարագոյր մը կրծոց և որովայնին մէջտեղը ձգուած է : Անհամար ծայրերու միջոցաւ որ թեք կը կոչուին, քեզի հիմա ստորագրած վանդակին՝ ստորին եզերքին վրայ կը յարի : անանկ որ 'ի սկզբան շարժելու անկարող կ'երևնայ, վասն զի մարմնոյն չորս դին միակերպ յարեալ կ'պած է :

Սակայն կը շարժի, այլ ոչ մեր վերոց տախտակներուն կերպով :

Խնդրէ եղբօրմէդ որ թաշկինակիդ երկու ծայրը բռնէ : միւս երկու ծայրերը դու բռնելով թաշկինակը հովուն կողմը դարձուր : Չորս անկիւնները հաստատ տեղերնին կը մնան անանկ չէ : սա կայն մէջ տեղը հովէն ուռելով, կը դուգանայ և դէպ 'ի առջև կը կլորի, ինչպէս նաւու առաջաստ մը, որ ըստ ինքեան մեծ թաշկինակ մըն է : Թաշկինակը ուժով մը դէպ 'ի ձեզի քաշեցէք, դու մէկ դի, միւսը միւս դին, մէկէն ինքն իրեն գալով կը տափկնայ կը շտկի : Թոյլ տուէք քիչիկ մը, դարձեալ մէջտեղէն կը կորանայ : այդ փորձը այդ կերպով ուղածիդ չափ կրնաս նորոգել :

Այդ գործողութիւնը, առաջաստը մինակ ինքնիրեն շարունակ կը կատարէ :

Իր բնական դիրքին մէջ, մէջտեղէն կլորելով վեր կ'ելլէ, ինչպէս հովէն ուռած առաջաստ մը, և այնպէս կրծոց մէկ մասը կը զրաւէ, թղթերը ճնշելով :

Երբ օդու տեղիք տալու հարկ կ'ըլլայ, իր թեւերը կը ձգտէ, որոնք զինքը նորէն կը տափկեցնեն, ինչպէս հիմա թաշկինակով կ'ընէիք դու և եղբայրդ : Բոլոր այն միջոցը որ իր կորովիւնը զրաւած էր, այս կերպով նորէն թղթոց կը դարձուի, որոնք մէկէն կ'ընդարձակին,

վասն զի առաձգական են . օղը բերնէն ու քթէն մէկէն ներս կը յարձըկի, ու հետագհետէ թոքոց մեծնալովը ձեացած պարապը կը լեցընէ, ճշդիւ նոյն կերպով ինչպէս փքին նկատմամբ կ'ըլլար :

Անմիջապէս ետքը առագաստին թեւերը դարձեալ կը թուլանան, որ նորէն իր առջի միջոցին մէջ կը կանգնի, առջևէն թոքերը մղելով . և այն օղը որ աւելորդ է, ուսկից մտեր է՝ անկէ դուրս կ'ելլէ : Միւսը, կ'ըսեմ, աղէկ ուշ դիր, վասն զի մտնելով ու ելլելով ալ մի և նոյնը չըլլար, և ասոր մէջն է, ինչո՞ւ հաւանար կը շնչէ մարդ հարցման գաղտնիքը, ինչպէս ալ այն առագաստին երթեակ շարժմունքն է՝ ինչպէս կը շնչէ մարդ, հարցման մեկնութիւնը :

Ինչպէս կը տեսնես այդ փութին մեքենականութիւնը ամենապարզ է, և հետևաբար ամենաճարտար, և իրմէն շատ վար կը մնան բոլոր մեր հնարած դիւտերը :

Ահ, իրան, պիտոր ըսես, լմնցաւ ամեն բան . հապա այն հրաշալիքները որ ինծի խոստացեր էիր : Որչափ ուզես զուրցէ, քու թաշկինակովդ որ կ'ուռի ու կը տափկի, անանկ զարմանալի բան մը չեմ տեսնար, և չէր աժեր որ այդ կերպով բերնիս ջրերը վաղցընես :

Քիչ մը համբերութիւն ունեցիր, օրիորդ : Դեռ հազիւ թէ մեքենան դիտեցինք . սակայն ներսը ոգի մը կայ, և ահա կիւսից պատմութիւնը սկսինք պիտի :

Ընտանեաց ոմանց մէջ անանկ ծերացած ծառաներ կը գտնուին, որ կերպով մը տանը մէջ աւելի մասն ունին քան զբուն տէրերը : Այս ետքիններուն տղայութիւնը առջինները սնուցեր են, և մինչև ցմահ անոնց կը ծառայեն . միայն անոնց համար կ'ապրին, և զիշեր ցորեկ ընելիքնին անանկ աղէկ դիտեն, որ հարկ չկայ իրենց հրամայել : Եւ ոչ թէ միայն պէտք չունին հետերնին հրամանատուութեամբ վարուելու, այլ և շատ անգամ անօգուտ աշխատանք է : Անանկ աղէկ կը գտնուին այն տանը մէջ ինչպէս թէ բուն սուներնին ըլլար . իրենց զլխուն ուզածը կ'ընեն, եթէ իրենց ու-

նակութենէն զիրենք անհանդիստ ընել կ'ուզես, հազիւ թէ վայրկեան մը քեզի մտիկ կ'ընեն, ու նորէն իրենց հին ոճին կը դառնան, քեզնէ աղէկ դիտեն թէ քեզի ինչ պէտք է :

Դեռ ևս պզտի եղած ժամանակս իմին յատուկ գործածութեանս պատմական գրքերու մէջ դառն տրտունջներ կը կարդայի այդ հին ժամանակի ծառայից անյայտ ըլլալուն վրայ : Քեզի ալ անշուշտ կարգացուցած պիտոր ըլլան որ այդ ծառաներէն ալ չկայ . և սակայն գիտցիր որ քեզնէ ետք ալ այդ ծառաներէն գտնուին պիտի այն առաներուն մէջ, որ զանոնք ձեացընել ու պահել գիտնան : Կամ աղէկ կամ գէշ ըսէ այն հին ժամանակները, միայն այն ատեն ները կը գտնենք ատոնք :

Այլ և ես ալ որ քեզի կը խօսիմ այդպիսի ծառաներէ մէկ մ'ունիմ, նաեւ մայրդ ալ ունի մէկ մը, և որ աւելին է դու ալ մէկ մը ունիս, և նաեւ բոլոր աշխարհ, որ ալ աւելի զարմանալի է : Այդ հին ժամանակի ծառան՝ որ երբեք չի կրնար անյայտ ըլլալ, (ատոր դէմ զուրցելու բան մը չկայ) առագաստն է :

Երբ դու աշխարհս գալու կ'ըլլայիր, սիրելի օրիորդ, այն ատեն որ խեղճ ու զորմելի պզտի կտոր մը միս էիր, առանց ուժի, առանց մտաց, առանց կամաց, անկարող ամենեկին քու գործարանացդ, որոնց վրայ դեռ ևս ծանօթութիւն չունէիր, ինչ և իցէ հրաման մը տալու, քու առագաստդ հանդարտաբար իր ծառայութիւնը կատարելու սկսաւ, առանց քեզի բան մը հարցընելու, և քու առաջին շնչառութեամբդ՝ կեանքդ ալ սկիզբն առաւ : Անկէ ետքը միշտ քալելու հետ է, թէ անոր ուշադրութիւն ընես կամ ոչ, և անոր ետքի ճիղը քու յետին շունչդ պիտոր ըլլայ :

Երբ դու քուն կ'ըլլաս, անգէտ ամենեկին այն ամեն բանի որ մինչև արթննալդ կատարուի պիտի, անիկայ իր տեղը անխոնջ քեզի համար կ'աշխատի, և այն թեթեւ շունչը որ անցնելով քու վարդագոյն պզտի շրթունքներդ պզտիկ մը կը բանայ, այն թեթեւ շունչը որ քու

երջանիկ մայրդ կու գայ կը լրտեսէ, ա-
նոր գործն է: Կէս գիշեր կը զարնէ, մէկ
ժամ, երկու ժամ, ամեն բան քնոյ մէջ
ընկղմած է. ինքը միշտ կը հսկէ: Գիտէ
որ եթէ քեզի պէս ինքն ալ քուն ըլլայ,
ալ քեզի արթննալ չկայ:

Կը շարունակուի:

ԼՈՆՏՐՍ.

Անկոյ-Սաքսոն ցեղին հնարքներուն
մեծոքիշնը և գորոքիշնը:

Սաքսոններուն բարուց մէջ երկու
յատկութիւնք աւելի աչքիս կը զար-
նեն. Մեծութիւն և Զօրութիւն: Այս
երկու յատկութիւնները իրենց ամեն
գործոցը վրայ դրոշմած են, և մասնա-
ւոր կերպով իրենց քաղաքաց ձեռն
վրայ: Աչքդ մէյմը Լոնտրայի վրայ դար-
ձուր, այն քաղքին՝ որ միշտ կը դադրի
և նորէն կը սկսի. Նիակարայի ջրվէժն,
այս մարդկային մակընթացութենէն,
Լոնտրայի ժողովրդենէն, աւելի քիչ
աղմուկ և ծուխ կը հանէ և նուազ ա-
լիք ունի:

Մանաւանդ նոյեմբերի մէջ յաճա-
խած միդապատ օր մը տեսնելու է այս
մեծայալթ նորասպանչ և աշխարհիս
մէջ առաջին քաղաքը: Խարտեաշ մէզն
ալ աւելի կը թանձրանայ ծուխի հեղեղ-
ներով, զոր կը ծխեն երկինք բարձրա-
յեալ աղիւսեայ մեծամեծ խողովակ-
ներն, ճարտարարուեստից հազարաւոր
փուռերն, գործարանաց և տանց ծխան-
ներն: Եթէ ժամացոյցդ նայիս՝ առաւօ-
տեան ժամն տասնութէկն է, իսկ եթէ
երկինքը նայիս դեռ գիշեր է: Կազերուն
կտուցներն կը վառին, Սգրէնտ փողո-
ցին կը պալկներն լուսաւորուած են.
արք և տղայք, սատանայի պէս սեք,
ձեռքերնին ջահեր կը կրեն, մինչև ձիե-
րուն ոտից տակ. բայց ինչ օգուտ,
լոյսն ուրիշ բանի չի ծառայեր՝ բայց
եթէ միգին կապարեայ գոյնը աւելի
դուրս ցատքեցընելու: Եւ սակայն այս

սահուն ամպին մէջ, այն ցորեկուան
խաւարին մէջ, կ'երթան կու գան, կը
դառնան, մէկմէկու ճամբան կը կտրեն,
անվիշտ, բազմահոգ և լուռ դիմօք մար-
դիկ, ոմանք հարուստ հագուստներով և
այլք խեղճ ցնցոտեօք: Կարծես թէ գե-
րեզմանի մէջ շարժող շուքեր են:

Սակայն կրնամ դքեղ ապահովյը-
նել որ անոնց գործունէութեան նպա-
տակն ալ աւելի ցնորակերպ բաներ են:
Իւրաքանչիւր ոք ըստ իր գաղափարաց
կամ զբաղանաց՝ Լոնտրայի մէջ տար-
բեր քաղաք մը կը փնտռէ: Պ. Բողչիլտ
աշխարհիս ամբողջ դրամասեղանը հոն
կը փնտռէ. վաճառականն՝ գործոց ա-
մենէն մեծ թատրոնը. անասնաբոյժն՝
արջառոց համար ընդարձակ վաճառա-
նոց մը. տէրութեան մարդն՝ կառավա-
րութեան աթոռը և վարչութեան դա-
նազան ճիւղերը. զուարճասէրն՝ տեսա-
րանաց յայտարարութիւնները կամ
կապելայից դուռը. իսկ արուեստաւորն
այս ամեն բանս ալ կը փնտռէ և կը
գտնայ հոն: Ով որ ամբօխներու և ընդ-
արձակ քաղաքաց տեսքը կը սիրէ՝ յօ-
ժարութեամբ ճամբորդաց կը թողու
անապատը. Լոնտրայի մէջ մարդկային
անտառաց կը հանդիպի, ուր դիտողու-
թեան նիւթերն՝ մեծութեամբ՝ բնու-
թեան զարմանալի տեսարանաց կը հա-
ւասարին: Մարդ տեսակ մը զմայլմունք
և զլխապտոյտ կը զգայ՝ մարդկային կե-
նաց բոլոր այս կերպարանքները նկա-
տելով, որոնց զանազանութիւնն ան-
հատում է: Դարձեալ եթէ հոգնիս ա-
ռուտուր ընող ժողովուրդ մը տեսնա-
լէն, մեքենայից անիւներուն զորդեղէն,
ձիերէ, շոգեշարժից և կառաց մշտնջե-
նաւոր աղմուկէն, որոնք նոյն իսկ Լոնտ-
րայի փողոցներու մէջ սուլելով զլխուդ
վրայէն կ'անցնին, քայլ մըն ալ ա՛ռ և
այն խառնիճաղանճին ցամաք միայնու-
թեան մէջ՝ կը գտնաս ովասիս մը:

Ամառ իրիկուն մը հայտ-Փարքի մէջ
էի. չորս կողմն ամենայն ինչ լուռ էր,
բաց 'ի թռչուններէն. կովերը հոն կ'ա-
րածէին, հին և մեծ ծառեր՝ հովու
տուած կը տատանէին իրենց թարչա-